

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԵՏՈՒՄԻ ՊԱՏԺԵԼԻՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԳԻԾ ՓԱՐԻԶ

ՀԱԶԱՐ ՀԱՅԵՐ ԾԵՐԱԿՈՅՏԷՆ ՅԱՐԳԱՆՔ ՊԱՀԱՆՋԵՑԻՆ

ԻՐԵՆՑ 1,5 ՄԻԼԻՈՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐ

Աւելի քան հինգ տարի է, որ Թերակոյտը Ազգային Ժողովին կողմէ ընդունուած՝ Ցեղասպանութեան ժխտումը պատժելի դարձնող օրէնքին քննարկումը կը ձգձգէ: Շաբաթ, Մարտ 12ի յետմիջօրէին, Հայկական Կազմակերպութիւնները Համախմբող Խորհուրդը (CCAF) Թերակոյտի շէնքին ճիշդ դի-

ներուն ու անձրեւանոցներուն օձիքներուն վրայ: Հայկական ցոյցերու անբաժան մասնակիցը՝ անձրեւը անգամ մը եւս հաւատարիմ էր ժամագրութեան: Իրենց պահանջատիրութիւնը արտայայտելու եկած շուրջ հազար Հայերու առջեւ հանրահաւաքին բացումը կատարեց Հայ Դատի փարիզեան գրա-



մացը նոր ցոյց մը կազմակերպեց բողոքելու համար անընդունելի այս կացութեան դէմ: Հարթակին վրայ գետեղուած էր հսկայ պատառ մը, որուն վրայ արձանագրուած էր օրուան լոզունգը՝ «Ժխտողականութիւնը ոճիր է, զայն պատժելու համար օրէնք մը կ'ուզեմ»: Նոյն արձանագրութիւնը կըրող թղթիկներ ալ բաշխուած էին ներկաներուն, փակցնելու համար բաճկոն-

սենեակէն Թանիա Պապանազարեան, որ ստանձնած էր օրուան խօսնակի դերը: Ան մէկ առ մէկ թուեց այն բոլոր անձնաւորութիւնները եւ յոյն, հրեայ, կիպրացի, ասորի, քիւրտ համայնքներուն ներկայացուցիչները, ինչպէս նաեւ այլախոհ Թուրքերը որոնք փութացած էին այս ձեռնարկին, ցոյց տալու համար իրենց զօրակցութիւնը արդար դա- (շաբ.ը էջ 4)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
ՏՐԱՆՍԱԿԱՆ
ԴԻԻԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
Ժ. 2. 3

ԴԻՏԱԿ
ԿՐԿԻՆ ՄԱՐԴԱԿԱՅԻՆԷՆ
ԴԷՊԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՆԱՐԺԱՆ ԴՊԻՐ
«ԱՆԵՂ ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆ,
ԹԷ ՉԱՆԵԼ»
ԿԱՄ
ԱՐԱ Խ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
ՑՆՑԻԶ ՅՕԴՈՒԱԾԱՇԱՐՔԸ՝
ՈՒՂԵՑՈՒՅՑ «ՀԱՅԱՍՏԱՆ»
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿՈՊԷԼԵԱՆ
Ա. ՄԱՍ 6

**ՃԱՓՈՆԱԿԱՆ
ՄՂԶԱԻԱՆՋԸ**

ԵՐԿՐԱՇԱՐԺԷՆ, ՑԻԻՆԱՄԻԷՆ
ԵՒ 10.000 ԶՈՇԵՐԷՆ ԵՏՔ
ԱՅՍ ԱՆԳԱՄ ԱԼ ՀԻԻԼԷԱԿԱՆ
ԱՂԷՏ

Ճափոնի հիւսիս-արեւելեան շրջանին մէջ Ուրբաթ, Մարտ 11ի կէսօրին պատահած աննախադէպ երկրաշարժը եւ անոր յաջորդած ցինամփին արդէն աննկարագրելի աւերներ գործած են այդ երկրին մէջ, որ սկզբունքով բնական նման աղէտներու դէմ նախապատրաստուած է: Հակառակ ասոր, այնքան բուռն եղած են ցնցումները եւ այնքան հսկայ՝ ցինամփին պատճառած ալիքները, որ մարդկային ոչ մէկ նախատեսութիւն կամ ուժ կրնար դիմադրել անոնց: Ճափոնէն հասած տեսարաննե- (շաբ.ը էջ 2)

ՃԱՓՈՆԱԿԱՆ ՄՂՁԱԻԱՆՋԸ

(շար. Ա. Էջէն)

րու մէջ կարելի է տեսնել տանիքներու վրայ ինքնաշարժեր, մինչև քաղաքներու փողոցները շարտուած նաւեր, օդին մէջ կախուած երկաթուղիի գիծեր... Քառասային այդ տեսարաններուն հետ զոհերու թիւն ալ անդադար չաւելում



կ'արձանագրէ ու անցած է 10.000ը: Տեղւոյն վրայ վերապրողներ փնտռելու աշխատանքները կը շարունակուին 100.000 զինուորներու կողմէ, որոնց միացած են միջազգային փրկարար ջոկատները:

Բայց այս անասելի ողբերգութիւնը գրեթէ շուքի մէջ մնացած էր հիւլէական աղէտին սպառնալիքին պատճառով: Արդարեւ, Ֆուքուշիմայի կայանին հիւլէական երեք բարդերը (réacteur) սկսած էին տաքնալ: Շաբաթ օր թիւ 1 հիւլէական բարդին պայթումէն ետք, երկուշաբթի, Մարտ 14ին նոր պայթումներ տեղի ունեցած էին թիւ 3 հիւլէական



բարդին մէջ, տանիքը բոլորովին օդը բարձրացած էր: Թիւ 2 հիւլէական բարդը պաղեցնող սարքաւորումն ալ խանգարուած էր եւ ամեն վայրկեան կը սպասուէր նոր պայթումի մը: Կայանին շրջապատը ապրող հարիւր հազարաւոր

բնակիչներ տեղափոխուած են: Վախկար բնականաբար շողագործօն արտածորումի. զուգահեռաբար քիմիական նիւթերու անձրեւներ ալ յայտարարուած էին:

Մնաց որ ցնցումներն ալ չեն դադարած: Սաստիկ նոր ցնցումի մը եւս կը սպասուի յառաջիկայ օրերուն:

Միլիոնաւոր ձափոնցիներ կը շարունակեն զրկուած մնալ ելեկտրականութենէ, կազէ: Մննդեղէնի եւ վառելանիւթի տագնապ ալ սկսած է:



ԼԻՊԻԱ

ՍԱՐՔՈՉԻ Կ'ՈՒՉԷ ԽԻՍՏ ՄԻՋՈՑՆԵՐՈՒ ԴԻՄԵԼ ՖՐԱՆՍԱ ՊԱՇՏՈՆԱՊԷՍ ԸՆԴՈՒՅՑԱԻ ԼԻՊԻՈՅ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

Մինչ տեղւոյն վրայ Քատաֆի ոչ միայն կը շարունակէ դիմադրել, այլ նաեւ կը վերագրաւէ բազմաթիւ շրջաններ որոնք ձեռքը անցած էին ապստամբներու, անդին եւրոպացի որոշ ղեկավարներ սպառնիչ լուծումներ կ'ուսումնասիրեն բռնակալին դէմ:

Շաբաթավերջին, Քատաֆիի հատարիմ ուժերը կը փորձէին «ազատագրել» Պէնկագի քաղաքը ուր հաստատուած է ապստամբական ուժերու հիմնած Փոխանցման Ազգային Խորհուրդը:

Շաբաթ, Մարտ 12ին, Պրիւքսէլի մէջ



Նախագահ Սարքոզի Լիպիոյ ընդդիմադիրներու հետ

հարուածներու դիմել Քատաֆիին դէմ: Ըսաւ թէ այդ մասին Բրիտանացիները համակարծիք են իրեն հետ: Ֆրանսա նաեւ Լիպիոյ ընդդիմադիր Խորհրդարանը ճանչցող առաջին եւ միակ երկիրը եղաւ: Փարիզ նոյնիսկ յայտարարեց թէ փոխադարձաբար դեսպաններու առաքում պիտի կատարուի: Այս ամբողջը սակայն այնքան ալ հաճելի չէ թուած Սարքոզիի եւրոպացի բարեկամներուն, մանաւանդ Գերմանիոյ, որոնք զինքը ամբաստանած են ինքնագլուխ եւ առանց խորհրդակցելու դիրքորոշում ճշդելով, երբ իրենք պիտի նախընտրէին որ Եւրոպա մէկ եւ միացեալ ձայնով արտայայտուէր: ՄԱԿ-էն եւ ՕԹԱՆ-էն ալ պահանջուած էր, որ Լիպիոյ օդային տարածքը փակելու որոշում կայացնեն:

Քաղաքագէտները Ֆրանսայի այս աճապարող կեցուածքը կը մեկնաբանեն Թունուզի եւ Եգիպտոսի շարժումներուն առթիւ իր արձանագրած յապաղումը չկրկնելու մտահոգութեամբ:

Թուրք մամուլը քննադատական տողեր ունի Սարքոզիին ուղղուած: Թրքական թերթերը կը գրեն թէ բաւ էր որ Թուրքիոյ վարչապետը յայտնէր իր ընդդիմութիւնը Լիպիոյ մէջ զինուորական միջամտութեան մը, որպէսզի Սարքոզի հակառակը պահանջէր:

տեղի ունեցած եւրոպական արտակարգ վեհաժողովին, որ նուիրուած էր Լիպիոյ հարցին, Սարքոզի պահանջեց վճռական միջոցներու դիմել: Յայտարարեց, թէ քիմիական զէնքերու գործածութեան կամ բնակչութեան ուժեղացման պարագային պէտք է «թիրախ»

NOR HARATCH

Journal hebdomadaire en langue arménienne

83, rue d'Hauteville, 75010 Paris

Téléphone: 01 55 32 06 72

contact@norharatch.com

annonces@norharatch.com

abonnements@norharatch.com

Journal édité par SARL Nor Haratch

Directeur de publication: Jiraïr Jolakian

CPPAP: 1110 I 90193

ISSN: 2105-7672

Imprimé et distribué par SAS Inter Routage

49-55, rue des Écoles,

93321 Aubervilliers Cedex

Prix d'Abonnement annuel (France): 220 €

Prix d'Abonnement annuel (Hors France): 270 €

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՕԴԱԿԱՅԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ՝ ՄԱՅԻՍ 9ԻՆ

ԼՂՀ Քաղաքացիական օդուժի վարչությանը յայտարարած է, թէ այս տարուան Մայիս 9ին Ստեփանակերտի օդակայանը պատրաստ կ'ըլլայ շահագործման: Վարչությունէն յայտնած են, որ շէնքի յարդարման աշխատանքները արդէն աւարտած են, կը շարունակուի թէքնիք սարքաւորումը, որու աւարտէն յետոյ կը սկսի վերջին փուլը՝ տարածքի կպրապատումը:

Ստեփանակերտի օդակայանը պիտի կարենայ սպասարկել ժամական 100 ճամբորդ: Սկզբնական փուլին կ'ապա-



հովուին միայն Ստեփանակերտ-Երեւան-Ստեփանակերտ թռիչքներ. սակայն կան այլ ուղղություններով թռիչքներու հեռանկարներ ալ: Թռիչքները կը կատարէ «էյր Արցախ» օդային ընկերությունը՝ 50 հոգինոց երեք SRJ-200 օդանավերով, որոնցմէ իւրաքանչիւրը կ'արժէ 15-16 միլիոն տոլար:

ՀԻՄԻՍԱՅԻՆ ԿԻՊՐՈՍ ԹՈՒՐԳԵՐԸ ԶԵՐԲԱԿԱԼԱԾ ԵՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՐԵՍՓՈՒՆԱՆՆԵՐ

Կիպրոսի թրքական գրաման տակ գտնուող բաժնին ոստիկանությունը եւրոպացի երկու խորհրդարանական եւ Յոյներ ձեռքակալած է: Անոնք ամբաստանուած են արգիլեալ ռազմական տարածք մուտք գործած ըլլալու յանցանքով:

Էն հերեփոխանները քանի մը ժամ ետք ազատ արձակուած են, սակայն մերժած են լքել ոստիկանականատուներ, այնքան ատեն որ ազատ շարձակուին նաեւ կիպրացի այն Յոյները, որոնք ձեռքակալուած են իրենց հետ: Խուճաբ կ'այցելէր Ֆամակուսթա քաղաքի Վարոշայի լքեալ թաղամասը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԻԲԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Մարտ 9ին, Ֆրանսուա Ռոշպլուան՝ Ֆրանքեմակական խորհրդարանական բարեկամական խումբի նախագահը, Ֆրանսայի խորհրդարանին մէջ, արտաքին գործոց նախարար Ալէն Ժիսկիէին շատ դիպուկ հարցում մը կը յղէ Արցախի Հանրապետութեան վերաբերեալ: Նախարարը նույնքան դիպուկ պատասխան մը կու տայ առանց սակայն իսկապէս պատասխանելու տրուած հարցումին, ըսելով որ գործի վրայ ենք (այսինքն՝ ասկէ աւելին մի սպասէք):

Առաջին կէտը, որ խորապէս գնահատելի է, Ֆրանսայի կառավարութեան կեցուածքին փոփոխութիւնն է, բաղդատած՝ ասկէ երկու շաբաթ առաջ, Տիկին Միշէլ Ալիօ-Մարիի նախարարութեան օրօք եղած ճնշումի անընդունելի փորձին, երբ արտաքին գործոց նախարարութիւնը պահանջած էր CCAF-էն Արցախի հանրապետութեան զօրակցութեան երեկոյթին անուանումին փոփոխութիւնը, այդ Հանրապետութեան Ֆրանսայի կողմէ ճանչցուած չըլլալուն պատճառաբանութեամբ:

Արդ, այս միջադէպի վաղորդայնին, Բակո Սահակեան, Ֆրանսայի կողմէ՝ իբր հանրապետութիւն ճանչցուած երկրի մը նախագահը ըլլալով հանդերձ, կրցած էր նույնիսկ Խորհրդարան մուտք գործել եւ յայտնել որ Արցախի Հանրապետութիւնը մեծ յոյսեր կը կապէ Ֆրանսայի, խաղաղ լուծում մը գտնելու համար: Այս մէկ:

Իսկ երկրորդ կէտը Ֆրանսուա Ռոշպլուանի կողմէ Արցախի հարցին զուսպ ու կատարեալ ներկայացումն էր: Հոն նշուած էր հիմնական երկու խնդիր.

— մեծ տէրութիւններու շահերու բախումը արգելք է արդար լուծումի մը յանգումին,

— Արցախի իշխանութիւններուն բանակցութիւններուն մասնակցութեան իրաւունքը՝ իբր շահագրգիռ կողմ, կաշկանդուած է Միւնսի խումբի անդամներուն կողմէ:

Ռոշպլուան նշեց նաեւ պատմական ճշմարտութիւնը՝ Արցախի պատկանող հողակտորին Համայնավար կուսակցութեան կողմէ Ազերպայճանին իբր նուէր տրուելու պարագան եւ հարցոց թէ ի՞նչ է Ֆրանսայի կառավարութեան նախաձեռնութիւնները խնդրին լուծումին ուղղուած, ի տես վերջին շրջանին Ազերպայճանի կողմէ առնուած նախադարձակ կոուազան քայլերուն:

Ալէն Ժիսկիէ բնականաբար Փարիզի

9րդ թաղամասի հանրահաւաքին առթիւ արտաքին գործերու նախարարութեան գործած անհետեթ սխալը սրբագրելու առիթը չփախցուց: Միաժամանակ արդարացուց ֆրանսական կողմին կեցուածքը, թէ Հայերու որոշումով է, որ եռակողմ հանդիպումներուն Արցախի իշխանութեան մասնակցութիւնը կատարուած էր, աշխարհի վրայ որեւէ պետութեան կողմէ ճանաչում գտած չըլլալով ինք իր անկախութիւնը հռչակած այդ հողամասը:

Նախարարին դիւանագիտական պատասխանին մէջ, ինչ որ «յանդուգն» էր սակայն, այն պնդումն էր որ Ֆրանսայի համար՝ ժողովուրդներու ինքնավարութեան իրաւունքը կը կազմէ այն հիմնական սկզբունքը որուն վրայ պէտք է հաստատուի որեւէ լուծում: Այս վերջին նախադասութիւնը ֆրանսահայութիւնը յատկապէս սիրաշահելու ուղղուած խօսք մըն էր: Ժիսկիէ նախապատուութիւնը կու տայ ժողովուրդներու ինքնավարութեան, փոխանակ շեշտը դնելու սահմաններու անձեռնմխելիութեան վրայ:

Թէեւ բուն խնդիրը կը մնայ անփոփոխ: Ինչպէս յայտնի է բոլորին, վերջին շրջանին Ռուսաստանն է որ կը վարէ բանակցութիւնները: Մետփետելի հովանիին ներքոյ տեղի կ'ունենան նախագահներու հանդիպումները ու Մոսկուայի հովանիին ներքոյ է որ կը վիճարկուի ժողովուրդներու ինքնավարութեան սկզբունքները: Ֆրանսան եւ ԱՄՆ-ը համահաւաքով ըլլալով հանդերձ, կը թուի թէ նուազած է անոնց ազդեցութիւնը: Այսուհանդերձ, ընտրութիւններու նախօրէին, Փետրուար 28ին CCAF-ի կողմէ Արցախի հանրապետութեան զօրակցելու հանրահաւաքը իր դերը կատարած է, Ֆրանսայի նախարարին արտասանել տալով ժողովուրդներու ինքնավարութեան սկզբունքի շեշտումը, առանց պետութիւններու սահմաններու անձեռնմխելիութեան սկզբունքի յիշատակումին:

Վերջին հաշուով, դասական դեղամիջոց մը՝ ընտրական գործօցի շահագործումը, որ տասնեակ տարիներ է կ'օգտագործուի: Հարկ է անցնիլ ատելի ազդու եւ ներգործող միջոցներու ֆրանսահայութիւնը ատելի մօտէն աղընչելու համար քաղաքական ասպարէզին, տնտեսական լծակներ բանեցնելու, շրջանին մէջ հայութեան ապահովագոյն գործընկեր ըլլալու երեւոյթը յիշեցնելով:

Ժ. 2.

ՀԱԶԱՐ ՀԱՅԵՐ ԾԵՐԱԿՈՅՏԷՆ ՅԱՐԳԱՆՔ ՊԱՀԱՆՋԵՅԻՆ

(շար. Ա. Էջէն)
տին:

Առաջին խօսքը տրուեցաւ CCAF-ի նախագահ Ալեքսի Կէօվճեանին: Ան ըսաւ թէ հինգ տարի ձգձգում բաւ է, այլեւս պէտք է օրակարգի բերուի օրինագիծը որպէսզի Թուրքիա ազատ

լու ուղղութեամբ: Մասնաւորապէս ողջունեց այն Թուրքերը որոնք քաջութիւնը ունէին բարձրաձայն գոչելու ճշմարտութիւնը: Ըսաւ թէ այդպիսի կեցուածքով է, որ հաշտութիւն մը կարելի պիտի ըլլայ ձեռք ձգել: Յուցարարներու շարքերէն այն տպաւորութիւնը ունեցայ որ այս եզրայանգումը այնքան ալ ջերմօրէն չընդունուեցաւ:

Իրեն յաջորդեց Իսիի քաղաքապետ,



Ընկերվարական ծերակուտական Սերժ Լակոշ

համարձակ չկարենայ շարունակել իր քարոզչութիւնը, որպէսզի մեր արժանապատուութեան նկատմամբ յարգանք ցուցաբերուի, որպէսզի մեր յիշողութիւնը այլեւս չ'ոտնակոխուի:

Ապա խօսք առնելու հրաւիրուեցաւ նախկին նախարար, Հօ տը Սէն նահանգի Ընդհանուր Խորհուրդի նախագահ Փաթրիք Տէվէճեանը: Անոր առաջին ըսածը այն էր, որ հոս կը գտնուէր որովհետեւ կը յիշէր թէ ուրկէ՞ կու գար, բայց ըսաւ նոյնքան եւ աւելի եւս անոր համար, որ պետական իմա՝ Թուրքիոյ մակարդակով ժխտողականութիւն մը կը կատարուի եւ Ֆրանսա մեղսակից կ'ըլլայ անոր, իր դիրքորոշումով: Ըսաւ, թէ Ֆրանսայի պարտականութիւնն է ստանձնել մեր պաշտպանութիւնը, աւելցնելով որ մեզ բնութագրողը Յեղասպանութիւնն է: Ան իր ելոյթին մէջ յատուկ բաժին մը յատկացուց թրքական այն պնդումին թէ հարցը պէտք է քննարկուի պատմաբաններու կողմէ: Ըսաւ թէ Յեղասպանութենէն ետք, տասնամեակներ ու տասնամեակներ պատմաբանները չհետաքրքրուեցան մեր ճակատագրով, այսօր անոնց է որ պէտք է յանձնուի ճշմարտութեան դատումը: Յիշեցուց նաեւ թէ 24/05/1915ին Ֆրանսա ինք կոչ ըրած է Թուրքիոյ, Հայոց Յեղասպանութիւնը դադրեցնե-

րենսփոխան Անտրէ Սանթինի: «Հայեր՝ եղբայրներս»ով սկսաւ իր կարճ ելոյթը: Զատագովեց Հայերը, ըսաւ որ Ֆրանսա շատ բան պարտական է անոնց: Յայտնեց վճռակամ կեցուածք, նշելով թէ Յեղասպանութեան ճանաչումը ձեռք ձգեցինք, ժխտողութեան պատժելիութիւնն ալ ձեռք պիտի ձգենք: Հայկական լուսին հրաւիրեց աւելի աշխոյժ ըլլալու: Եզրափակեց ըսելով թէ Ծե-

րակոյտը պէտք է ցոյց տայ, թէ Ֆրանսան Հայերուն կողքին է:

Յաջորդ խօսք առնողը եղաւ Շառլ Ազնաւուր, որ շատ կարճ ելոյթ մը ունեցաւ: Մատնանշեց, որ համաշխարհային երկու պատերազմերուն ալ Հայերը հոգւով սրտով պայքարեցան այս երկրին համար, արիւն թափեցին, զոհուեցան, ըսելու համար՝ «Ինձի ցոյց տուէ՛ք Թուրք մը, որ կրած է Ֆրանսական զինուորական համազգեստ»: Ըստ երեւոյթին ան հրաւիրուած էր առաւելաբար իր վարքով ցուցարարներու աւելի ստուար թիւ մը ապահովելու նպատակով, քան ելոյթ ունենալու:

Ազնաւուրէն վերջ խօսք առաւ գրող, պատմաբան, Ֆրանսայէն տեղահանուածներու փաստաբան Սերժ Քլարսֆելտ: Ան նախ կրկնեց Ողջակիզումին նախորդող օրերուն Հիթլէրի արտասանած՝ «Այսօր ո՞վ կը յիշէ Հայերու ջարդը» նշանաւոր դարձած խօսքը, դիտել տալու համար թէ անպատժելիութիւնը ինչպիսի արդիւնքներու յանգեցուցած է: Ապա խստօրէն պախարակեց UMP կուսակցութեան որոշ հոսանք մը, որ ոչ թէ միայն դէմ է ժխտողականութիւնը պատժող այս օրէնքին, այլեւ կ'ուզէ ջնջել այն բոլոր օրէնքները որոնք կ'առընչուին յիշողութեան, ինչպէս կ'ըսուի Ֆրանսերէն՝ «les lois mémorielles»: Յայտնեց նաեւ այն կարծիքը թէ Իսրայէլ ալ անվարան պէտք է ճանչնայ Հայոց Յեղասպանութիւնը: Ընդգծելէ ետք հայ եւ հրեայ ժողովուրդներու ճակատագիրներու նմանութիւնը եւ իրենց դահիճներուն ալ դաշնակից ըլլալու կէտը, իր խօսքը աւարտեց ըսելով թէ Կէսոյի օրէնքը պէտք է անպայման ընդլայնուի եւ պարփակէ



Փաստաբան Սերժ Քլարսֆելտ

նաև Հայոց Յեղասպանությունը:

Իրեն յաջորդեց տղան՝ Առնօ Քլարս-Ֆելտ: Իր ելույթին եւս առանցքը կազմեցին UMP-ի այն որոշ շրջանակները, որոնց մասին խօսեցայ վերը: Ան խստօրէն դատապարտեց այդ ուղղութեամբ քայլերը: Ինք եւս անընդունելի նկատեց հայկական օրինագիծին նկատմամբ Մերակոյտին ցուցաբերած կեցուածքը:

Ապա խօսեցաւ CCAF-ի համանախագահ Մուրատ Փափազեան: Ըսաւ թէ ինք ամօթ կը զգայ Մերակոյտին տեղ, որ կը քաջալերէ ժխտողականութիւնը: Յիշելով Wikileaks-ով բացայայտուած Սարքոզիի կեղծիքը, ըստ որուն ընտրուելէ առաջ տարբեր, ընտրուելէ ետք՝ տարբեր դիրքորոշում ցուցա-

տարուան կամ Մայիս 4ը կամ ալ Յունիս 30ը: Այլ խօսքով այս երկու թուականներէն մէկը ճակատագրական պիտի ըլլայ օրինագիծին ապագային առումով:

Ապա յաջորդաբար խօսք առին համայնավար նախկին ծերակուտական Հայ Դատի պաշտպան Տիկին Էլէն Լիւք, նախկին դիմադրական, Մանուշեանի խմբակի վերջին վերապրողը՝ Արսէն Չաքարեան, Արնուվիլի քաղաքապետ Միշէլ Օմաս (UMP): Այս վերջինը իշխանութեան գլուխ գտնուող կուսակցութեան մաս կազմելով հանդերձ, արիաբար յորդորեց լաւ օգտագործել յառաջիկայ ընտրութիւններով ներկայացող առիթը:

Իրենցմէ ետք խօսք առաւ պատմա-



Փաթրիք Տէվէճեան եւ Ծաղլ Ազնաւոր

բերած էր ժխտողականութեան պատժելիութեան օրէնքին նկատմամբ, ըսաւ թէ տարիէ մը նախագահական ընտրութիւն կայ, պիտի տեսնենք, թէ ո՞վ մեր ճշմարիտ բարեկամն է եւ ու՞ր չէ:

Իրմէ վերջ խօսք առաւ ընկերավար ծերակուտական, Մերակոյտի Ֆրանսա-Հայաստան բարեկամութեան խումբի նախագահ Սերժ Լակոշ: Ան զօրակցական քանի մը խօսքէ ետք կարդաց Ընկերավարական կուսակցութեան ընդհանուր քարտուղարուհի Մարթին Օպրիի նամակը, յղուած՝ Մերակոյտի ընկերավարական խմբակցութեան նախա գահ ժան-Փիէր Պէլին. այդ նամակով Օպրի կը պահանջէ, որ իրենց կուսակցութեան պատկանող ծերակուտականները խորհրդարանական հիւղակ (niche parlementaire) մը կազմակերպեն, ինչ որ անհրաժեշտ է օրինագիծ մը օրակարգի բերելու համար: Այս ուղղութեամբ առաջարկուած է երկու թուական: Այս

բան ի՞վ Թերնոն: Ան հեզնանքով ըսաւ թէ 15 տարի հարկ եղաւ ազգային ժողովին բացատրելու համար Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը, բայց Մերակոյտը վեցերորդ տարին է, դեռ չէ հասկցած: Ապա հարց տուաւ թէ երբ Իրան կուրանայ Շոան, կը գայթակղինք: Ի՞նչ է Ֆրանսայի տարբերութիւնը ուրեմն Իրանէն, հարց տուաւ, եթէ հոս ալ՝ Հայոց Յեղասպանութիւնը կրնանք ուրանալ:

Թերնոնին յաջորդեց Հայ Դատի փարիզեան գրասենեակի պատասխանատուն՝ Հրաչ Վարժապետեան, որ օրուան հայերէնով ճառախօսող միակը եղաւ: Հայերէն իր խօսքերուն Մերակոյտի պատերէն արձագանգը խորհրդանշական էր: Ինք եւս շեշտեց այդ օրէնքին անհրաժեշտութիւնը, որպէսզի թուրքերը չկարենան գալ ու յայտարարել Ֆրանսական հողին վրայ, մեր աչքերուն մէջ նայելով, քթին խնդալով թէ Յեղասպանութիւն տեղի չէ ունեցած:

Խօսք առին նաև Ս.Օ.Ս. Յեղապաշ-

Լուսանկարները՝ Ժան-Մանուկ Երեմեան

տութեան նախագահը՝ Տոմինիք Սոփօ, CCAF-ի համանախագահ Արա Թորանեան, ՀՅԴ Նոր Սերունդի բանբեր՝ Եղիշէ Կորիզեան: Արա Թորանեան ընթերցեց նաև Պերնար-Հանրի Լեւիի ուղերձը. ինք անձամբ ներկայ չէր կրցած ըլլալ,



Ս.Օ.Ս. Յեղապաշտութեան նախագահ՝ Տոմինիք Սոփօ

Կիպիա ճամբորդութեան պատճառով: Հանրահաւաքը վերջ գտաւ որպէս յաջորդ ժամագրութիւն ճշդելով Ապրիլ 24ը:

Նշենք որ նոյն օրը այլ հանրահաւաքներ տեղի ունեցան Ֆրանսայի հայահոծ այլ քաղաքներու մէջ ալ:

Հազար Հայեր 1,5 միլիոն նախատակներուն համար... Հազար հոգի՝ հակառակ յայտարարուած «հրապուրիչ» անուններուն, հակառակ շաբաթներէ ի վեր կատարուող ժամուցումներուն, հակառակ որոշ դպրոցներու մէջ դասապահներու ջնջումին, հակառակ հոսկէ-հոցկէ առաքուած յատուկ հանրակառքերուն: Կը կարծեմ թէ երկար-բարակ մեկնաբանութիւնը աւելորդ է: Միայն թէ, հանրահաւաքի խօսակցներէս մէկուն ըսածը դեռ կը հնչէ ականջներուս մէջ: «Հազար հոգի. այսինքն Անատոլիայի գիւղական հարսանիքի հանդիսականներու բազմութիւն մը միայն: Ոչ աւելի»: Գոնէ, կը գիտակցի՞նք թէ ի՞նչ միջոցներ ի գործ կը դնենք՝ ի՞նչ պահանջելու համար, եւ որմէ՞: Եթէ բարոյական արժէքներու ապաւինիլը, լատեն ըլլալը կը բաւէ, երանի՞ մեզի...

ԴԻՏԱԿ

ԿՐԿԻՆ ՄԱՐԴԿԱՅԻՆԷՆ ԴԷՊԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Յանախ մարդկային անհատական յարաբերությունները օրինակ ծառայած են բնութագրելու համար քաղաքական յարաբերությունները: Ամենօրեայ կեանքի պարզ մարդկային կապերը փոխադրված են քաղաքական աշխարհ, աւելի պատկերալից ձեւով կարեւոր տալու համար ազգերու, պետութիւններու, կուսակցութիւններու, ղեկավարներու կապերը: Այսպէս օրինակ, կ'ըսուի՝ եղբայր պետութիւններ, քոյր քաղաքներ, այսինչ երկրին սիրաբանութիւնը այնինչ երկրին հետ, կամ տուեալ երկիր մը վշտացած է իր դրացիէն...: Եւ դեռ կարելի է երկարել շարքը:

Վերջին շրջանին Արաբական աշխարհին մէջ տեղի ունեցած իրադարձութիւնները իրենց բուն խորքէն անդին, այլ երեւոյթ մըն ալ պարզեցին այս առընչութեամբ:

Պէն Ալլի եւ Մուպարաֆի ճակատագիրներուն առթիւ ունեցանք յստակ գաղափար մը աշխարհի երկիրներուն անկեղծ եւ հաւատարիմ բարեկամութեան սահմաններուն շուրջ: Այդ երեւոյթը ա'լ աւելի շեշտուեցաւ Քատաֆիի ողիսականի այս օրերուն, որ դեռ կը մնայ բոլորովին անորոշ:

Ի տես համաշխարհային այս վարքին, անխուսափելի կը դառնան որոշ հարցադրումներ: Այդ բռնակալները, ինչպէս զիրենք կոչեցին աշխարհի բոլոր ղեկավարները, յեղափոխութեան շարժման առաջին խլրտումներուն ճախորդող գիշերը վերափոխուեցան. այդ գիշերը դարձան բռնակալ. ամեն ինչ պատահեցաւ այդ քանի մը ժամերո'ն կամ օրերո'ն. իրենց շնատամները առանէ՛ր սրուեցան՝ լաւագոյնըս ծծելու համար ժողովուրդին արիւնը: Ո'չ անշուշտ: Վերոնշեալ երեք բռնապետները 30էն 42 տարուան իշխանութեան անցեալի մը տէր դարձան, շնորհիւ միջազգային հանրութեան հաւանութեան եւ մեղակցութեան: Անոնցմէ նոյնիսկ ամենէն կարկառունը՝ Քատաֆի դեռ գրեթէ երէկ հիւրասիրուեցաւ Փարիզ, մեծագոյն պատիւներով. օրէնքները շրջանցելով, իրեն արտօնութիւն տրուեցաւ քաղաքին ամենէն ծանօթ հրապարակներէն մէկուն վրայ բանակավայր հաստատելու, ընդառաջելով իր պարզ քմահաճոյքին:

Նոյնիսկ եթէ կարելի չէ այդ ըսել Քատաֆիի համար, գոնէ Մուպարաֆ եւ աւելի սահմանափակ չափով Պէն Ալլի, տարիներով Արեւմուտքի բարեկամը, երբեմն

«ԱՆԵ՛Ղ ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆ, ԹԷ ՉԱՆԵԼ» ԿԱՄ ԱՐԱ Խ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՃՆՅԻՉ ՅՕԴՈՒԱԾԱՇԱՐՔԸ՝ ՈՒՂԵՑՈՅՑ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ

Ա.

«Անե՛ղ նուիրատուութիւն, թէ չանել»: Այս է հարցը, որ միլիոնաւոր Հայեր տալիս են իրենք իրենց» ներածականով կը սկսի հետաքննող լրագրող, մարդկային իրաւանց պաշտպան Արա Խ. Մանուկեանի՝ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին նուիրած յօդուածաշարքը: Երեք մասով 2010 Դեկտեմբեր 21ին, ապա Յունուար 5ին եւ Փետրուար 26ին, լրագրողին կայքէջին (www.thetruthmustbetold.wordpress.com) վրայ լոյս տեսած գրութիւնը շատ ծանր ամբաստանութիւններ կը պարունակէ ուղղուած՝ համահայկական վերոնշեալ կառոյցին: Հոն տեղ գտած պնդումները բնականաբար լայն աղմուկ բարձրացուցած են ու Հիմնադրամի ղեկավարութեան գայրոյթը առթած (տե՛ս. նՅ թիւ 189, Մարտ 10):

Երկարաշունչ այդ գրութեան դժբախտաբար ամբողջութեամբ կարելի չէ անդրադառնալ: Հոս, մեր նպատակն է բանավէճին ընդհանուր պատճառներուն մասին գաղափար մը տալ:

Արա Խ. Մանուկեան կը գրէ, թէ

2010ին հեռատեսիլի մարաթոնէն քանի մը օր առաջ «Հորիզոն» հեռատեսիլի կայանը հարցազրոյց մը սփռած է «Հայաստան» համահայկական հիմնադրամի ԱՄՆ-ու արեւմտեան շրջանի գործադիր տնօրէն Սարգիս Քոթանճեանի հետ: Ան կաշառակերութեան մասին լուրերը որակած է առասպել եւ փորձած է փարատել զանոնք: «Ստորեւ իւրաքանչիւր առասպել բառ առ բառ ներկայացուած է պարոն Քոթանճեանի ելոյթից, նրա մեկնաբանութիւնների հետ միասին, որոնք այստեղ ներկայացուած են իբրեւ “հերքում”: Առանցքային խնդիրների այլընտրանքային մեկնութիւնները ներկայացուած են իբրեւ “մերկացում»» կը գրէ Մանուկեան: Այլ խօսքով, մերկացումը՝ կատարուած հերքումին հերքումն է իր կողմէ: Այդ ձեւով ալ կը ներկայացնէ պնդումները անշատ գլուխներու տակ. նախ կու տայ առասպելները՝ թիւով ութ, յետոյ Քոթանճեանի հերքումը, հուսկ, ըստ դիտանկիւններու, կը մերկացնէ հերքումը կամ կը փորձէ

նոյնիսկ բերդը հանդիսանալէ ետք, մէկ օրէն միւսը դարձան բռնակալներ:

Անոնց վերագրուած բռնակալի այս որակումը կարելի չէ որեւէ ձեւով խընդրալարոյց ընել. հարցը սակայն, այդ որակումին արձակուած պահն է... երբ անոնք արդէն հասած էին անդունդին եզրը: Ի՞նչ քաջութիւն «երբեմնի բարեկամներ»ու կողմէ, որոնք կը յանդգնին անոնց մասին վերջապէս ճիշդ որակաւորում կատարել:

Մտածեցի՝ պարզուած այս պատկերը անգամ մըն ալ փոխադրել գրութեան ըսկիզբը ըսուածին հակառակ ուղղութեամբ, այսինքն՝ քաղաքական ասպարէզէն դէպի մեր ամենօրեայ պարզ յարաբերությունները: Որքա՞ն հետաքրքրական եւ իրատես պատկեր մը յառաջ կու գայ: Բարեկամներ, որոնք բարեկամ չեն, մարդիկ, որոնք մարդ չեն: Միայն շահեր ու հաշիւներ իրարու քով բերած են «մարդ»ու եւ «բարեկամ»ի ծրարումով ներկայացող արարածներ:

Յանկարծ չարաճճի հարցում մըն ալ ծնունդ կ'առնէ մտքիս մէջ: Պէն Ալլիի

եւ Մուպարաֆի հաշիւը մաքրուեցաւ: Բայց ենթադրենք, որ նոյնը չպատահի Քատաֆիի հետ. ենթադրենք, որ ան դիմադրէ եւ դիմանայ ու վերահաստատէ իր իշխանութիւնը: Ի՞նչ պիտի ըլլայ այն ատեն այն բոլոր պետութիւններուն ու ղեկավարներուն վիճակը, որոնք լեզուաբանական ամեն դարձուածք օգտագործեցին վարկաբեկելու համար զինք, նոյնիսկ մահացու վերջին հարուածի մը բաժնեկից դառնալու առաջարկներ բերին: Անոնք ի՞նչպէս պիտի կարենան փրկել կացութիւնը, քանի վաղ թէ ուշ կրկին գործ պիտի ունենան այդ երկրին հետ:

Ինչպէ՞ս: Ես վստահ եմ, որ այս հարցումին պատասխանը բոլորդ ալ ունիք ձեր շրջապատէն ծանօթ անձի մը կամ անձերու ընդմէջէն, անոնց հետ ձեր ապրած փորձառութիւններուն օրինակով... կը բաւէ զայն փոխադրել մարդկայինէն քաղաքական ասպարէզ:

ԱՆԱՐԺԱՆ ԴՊԻՐ

մերկացնել՝ իր մեկնաբանություններով:

ԱՌԱՋԻՆ ԱՌԱՍՊԵԼ

Այսպէս նախ կ'արժարձէ Հիմնադրամին քաղաքականացուած ըլլալու հարցը: Մինչ Քոթանճեան բացարձակապէս հերքած է այդպիսի բան, Մանուկեան կը փորձէ ցոյց տալ թէ, սկսած՝ Լ. Տէր-Պետրոսեանի օրով, Հիմնադրամի գործադիր տնօրէնի աթոռին տեղաւորուած են նախագահին անմիջական շրջանակէն դէմքեր: Այդպէս է, որ 1992ին Լ. Տէր-Պետրոսեան Մանուշակ Պետրոսեանը նշանակած է այդ պաշտօնին: «Հայաստան» համահայկական հիմնադրամի քաղաքականացումը ակնառու դարձաւ, երբ ՀՅԴ բոյկոտեց հիմնադրամի գործունէութիւնը այն բանից յետոյ, որ իշխանութիւնները սկսեցին դաշնակցականների հետապնդումը Հայաստանում 1997 թ.: Դա յատկապէս ակնյայտ դարձաւ, երբ Լեւոն Տէր-Պետրոսեանի հրաժարականին 1998 թ. անմիջապէս հետեւեց Մանուշակ Պետրոսեանի հրաժարականը, որը ուղեկցուեց իր տնօրինութեան վեց տարիների ընթացքում դիզած հարստութիւնների, իր սեփական շքեղ դղեակի, ինչպէս նաեւ հիմնադրամի տնօրինութեան այլ անդամներին պատկանող «Պիոներ» պարի, «Ռիօ» կօշիկի խանութի եւ այլ դղեակների մասին մատուցած յայտնուած սկանդալային հրապարակումներով» կը գրէ լրագրողը: Կ'ըսէ, թէ Բաֆֆի Յովհաննէսեանը Հիմնադրամին թերեւս միակ գործադիր տնօրէնը եղաւ, որ հրապարակաւ խոստովանեցաւ որ ան քաղաքականացուած կառոյց է: Այս մասին, յօդուածագիրը, այլ թերթերու մէջ լոյս տեսած գրութիւններու շարքին, կը մէջբերէ նաեւ «Առաւօտ»ի մէջ 1999ին լոյս տեսած գրութիւն մը, ուր ըսուած է. «Հայ-

կական Սփիւռքը վերջին տարիներին Հայաստանին տրուող օգնութիւնը հիմնական կատարում էր զանազան հիմնադրամների միջոցով: Գործողութիւնների մեծ մասը հիմնականում իրականացուած էր «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով: Հիմնադրամների մի մասը փորձում է հնարաւորին շափ հեռու կանգնել քաղաքականութիւնից: Սակայն միշտ չէ, որ դա յաջողում է: Յունահայ համայնքը տարիներ առաջ 300 հազար տոլար գումար էր հաւաքել Հայաստանին տրամադրելու համար: Քաղաքական պատճառներով գումարի տրամադրումը յետաձգուած էր: Համայնքի ներկայացուցիչները միայն 1998 թ. աշնանը այցելեցին հայրենիքէ բանակային կորօնը (չէքը-ՅԿ) յանձնեցին ՀՀ նախագահ Ռ. Քոչարեանին»:

ու կ'աւելցնէ թէ ինչ գիտնային թէ որուն կը յանձնէին գումարը: Կը մէջբերէ նաեւ հոգաբարձուներու խորհուրդի 2009 Մայիս 18ի 18րդ նիստին փաստը. այդ առթիւ հոգաբարձուներու խորհուրդի նախագահ Ս. Սարգսեան լայնօրէն անդրադարձած է Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններուն կարգաւորման ուղղուած ջանքերուն, Դարաբաղեան բանակցութիւններուն:

ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱՍՊԵԼ

Ապա կ'անցնի երկրորդ առասպելին: Կը վերադարձնէ Քոթանճեանի խօսքերը. «Հեռատեսիլէն կը տեսնենք կամ համացանցէն կը կարդանք... կը խօսին բաներու մասին, որոնք չեն համապատասխաներ իրականութեան: Օրինակի համար, իբր թէ «Հայաստան» համահայկական հիմնադրամը կառավարական հիմնադրամ է եւ կը կառավարուի ՀՀ ղեկավարութեան կողմէ»: Ապա կը տըրուի այդ մասին Քոթանճեանի հերքումի

արտայայտութիւնները, ի շարս որոնց ան ըսած է. «Այդպէս չէ: Մենք հանրային կազմակերպութիւն ենք, բարեսիրական, ոչ կառավարական: Թէեւ մեր հոգաբարձուներու խորհուրդին մէջ ընդգրկուած են պետութեան ներկայացուցիչներ՝ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Դարաբաղի: Բայց ըսեմ, որ անոնք փոքրամասնութիւն կը կազմեն»: Քոթանճեան բացատրած է նաեւ թէ ամեն պարագայի բոլոր որոշումները կը կայացուին մեծամասնական կարգով, ուրեմն հարց չկայ:

Որպէս մերկացում Մանուկեան նախ որոշ դիտողութիւններ կը կատարէ խորհուրդի կառավարական եւ ոչ կառավարական անդամներու Քոթանճեանի տրուած թիւերուն առնչութեամբ: Ապա կը յիշէ իրարու յաջորդած երեք նախագահներու իշխանութեան օրով թերթերու մէջ լոյս տեսած հրապարակումներ, որոնց մէջ ըսուածները ըստ իրեն լաւագոյն փաստն են, որ Հիմնադրամը ՀՀ ղեկավարութեան ենթարկուած է: Նոյն ձեւով կը թուէ նաեւ Հիմնադրամին կանոնադրութեան յօդուածներ, որոնք իր կարծիքով նոյնպէս կ'ամրապնդեն այդ պնդումը:

Այս մասին իր մերկացումը կ'եզրափակէ ըսելով. «Եւ մէկ խօսուած հանգամանք հիմնադրամի եւ ՀՀ կառավարութեան փոխյարաբերութեան վերաբերեալ՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցէն է Կառավարութեան Յրդ շէնք, Երեւան, 0010, Հայաստանի Հանրապետութիւն»:

ԵՐՐՈՐԴ ԱՌԱՍՊԵԼ

Քոթանճեան շարունակելով շարքը՝ «Առասպել մը եւս կայ, ըստ որուն երբ կը հաւաքուին «Հայաստան» համահայկական հիմնադրամի գումարները, անոնք կ'անցնին պետութեան ձեռքը՝ կառավարութեան ձեռքը» ըսած է. ապա աւելցուցած՝ «Այս ալ այդպէս չէ, թիրիմացութիւն է ասիկա: «Հայաստան» համահայկական հիմնադրամը ունի դրամատնային քանի մը տասնեակ հաշիւներ, որոնք կը պատկանին «Հայաստան» համահայկական հիմնադրամին... Որեւէ տոլար, սէնթ, դրամ, եւրօ երբեք չի յայտնուիր որեւէ պետական, կառավարական հաշիւի վրայ... Այս ֆինանսները նաեւ, ըսեմ, որ կը ստուգուին, audit կ'ըլլան Grant Thornton-ի միջոցով, որ միջազգային մեծ ընկերութիւն մըն է, որ ներկայ է նաեւ Հայաստանի մէջ»:

«Կարող է եւ ճիշդ է, որ «որեւէ տոլար, սէնթ, դրամ, եւրօ երբեք չի յայտնուիր որեւէ պետական, կառավարական հաշիւի վրայ»: Սակայն նուիրատուների



**Pompes Funèbres - Marbrerie
Fleurs - Prévoyance Funéraire**

KOMITAS
AVEDISSIAN Rafi
© 06 12 87 95 28

7j / 7 - 24h / 24
112 bis, rue Etienne Dolet
94140 Alfortville
Tél. : 01 43 53 03 48
Fax : 01 43 53 08 15

շրջանում հիմնական մտահոգությունը ոչ թէ կառավարական հաշուեհամարներն են (ինչը ենթադրում է պետպիւտճէ), այլ աւելի շուտ կառավարութեան անդամների անձնական հաշուեհամարները՝ դիտել կու տայ Արա Մանուկեան: Ապա կ'աւելցնէ, թէ հարցը հոն է, թէ այդ գումարները Հիմնադրամին հաշիւներէն պէտք չէ հոսին դէպի պետական պաշտօնեաներու հաշիւները, ինչ որ, սակայն կարելի է ընել բազմաթիւ միջոցներով: Կու տայ շորս տարբերակ.

ա) գործադիր տնօրէնը որոշ գումարներ կը փոխանցէ այնպիսի հաշիւներու որոնք Հիմնադրամին չեն պատկանիր: Այս առընչութեամբ գլխաւորաբար կրկին անգամ կը յիշէ Մանուշակ Պետրոսեանի եւ իր շրջապատին օրինակը, թերթերէ արձագանգներ մէջ բերելով: Կը յիշէ նաեւ Բաֆֆի Յովհաննէսեանի պարագան. անոր տղուն՝ Կարին Յովհաննէսեանի իր հօր մասին գիրքէն (Hovannisian Garin, Family of Shadows, Harper Collins: New York, 2010) հատուածներ ներկայացնելով կը փորձէ ցոյց տալ, ի՞նչպիսի ճնշումներու տակ ստիպուած եղած է հեռանալ Հիմնադրամի գործադիր տնօրէնի իր պաշտօնէն, երբ «գալիս էին նախագահական գրասենեակից ասելով 50.000 տոլար այս մի հաշուի համար, 100.000 տոլար մէկ ուրիշի: Այս անգամ չկար այլեւս աւելի բարձր ատեան, որին կարող էր հասցնել իր բողոքի ձայնը»: Այնուամենայնիւ, Մանուկեան կը մեղադրէ Բ. Յովհաննէսեանին ալ, ատենին այդ ամբողջը բացայայտած շրջալուծն համար, մանաւանդ, որ դէպքերու այդ ձեւի վարգացումը իրեն ի վնաս եղած է, ըստ լրագրողին:

բ) Ընել այնպէս մը, որ շինարարական պայմանագրերը կնքուին այնպիսի ընկերութիւններու հետ, որոնց տէրերը իշխանաւորներն են կամ իրենց շրջանակէն մարդիկ:

գ) «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմէ կառուցուած շինութեան յետագայ սեփականաշնորհում:

դ) Պետական պաշտօնեայի կամ անոր շրջանակէն մէկուն սեփականութիւնը հանդիսացող հողակտորի բարեկարգում՝ Հիմնադրամին միջոցներով: Այս տարբերակներուն հետ ալ կու տայ անուններ, օրինակներ, որոնցմէ ամենէն հետաքրքրականներէն կը թուի ըլլալ հետեւեալը. «Սմբատ Յակոբեանը՝ առագաստանաւային սպորտի Հայաստանի հաւաքականի գլխաւոր մարզիչը, «Առաւօտ»ին տուած հարցազրոյցում ասաց. «երեւանում բացուել է առա-

AMBASSADE DE LA RÉPUBLIQUE D'ARMÉNIE

Paris, 10 mars 2011
ANNONCE

Du 18 au 21 mars 2011, l'Arménie participera, pour la troisième année consécutive, au Salon du livre de Paris. Le Stand d'Arménie est situé dans la série X33, VIPARIS - Pavillon 1, Porte de Versailles, 75015 Paris.

Seront exposées les publications des éditeurs de l'Arménie et de la France, ainsi que les œuvres des auteurs arméniens et étrangers, traduits en français ou en d'autres langues européennes (de contenu historique, touristique, belles-lettres, littérature pour enfants, beaux-arts, encyclopédies, dictionnaires, bandes dessinées, CD/DVD, etc.)

La délégation arménienne sera dirigée par M^{me} Arev Samouélian, Vice-ministre de la Culture de l'Arménie.

Le stand d'Arménie sera présenté par les modules suivants:

«Erevan, Capitale mondiale du Livre 2012», «Éditeurs d'Arménie», «Sigest et Éditeurs arméniens de France», «Bande Dessinée», «Ambassade d'Arménie en France».

Dans le cadre du Salon sont prévus les événements suivants:

- Projections des films sur l'Arménie et l'Artsakh et sur la vie culturelle des deux pays.
- Dédicace des ouvrages en présence des auteurs:

1. Maître Charles Aznavour, *À voix basse* (Samedi 19 mars, à partir de 14h)
2. S.A.R. Princesse Sophie Audoin-Mamikonian, *Tara Duncan et Indiana Teller*. (Samedi 19 mars, 15h-16h)
3. Anahit Toptchian, *Disparition*, Roman (Samedi 19 mars, 16h-17h).
4. Alexandre Toptchian, *Banque ottomane*, Roman (Samedi 19 mars, 17h-18h).
5. Gilbert Sinoue, *Erevan*, Roman (Dimanche 20 mars, 14h-15h)
6. Jean-Michel Berts, *Lumières d'Arménie* (Dimanche 20 mars, 15h-17h)

Le Salon sera également l'occasion d'informer le public sur la nomination par l'UNESCO de Erevan - *Capitale mondiale du Livre 2012*.

L'Ambassade d'Arménie en France vous invite à visiter le stand de l'Arménie qui sera ouvert au public du 18 au 21 mars. L'entrée est libre pour les enfants.

Pour tous renseignements supplémentaires veuillez visiter le site officiel du Salon:

<http://www.salondulivreparis.com>
Soyons nombreux pour faire bouger l'intérêt vers l'Arménie!

Service culturel de l'Ambassade d'Arménie en France

գաստանաւորդների միութիւն, որին՝ հանրապետութեան նախագահի հովանու ներքոյ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գումարներով վինտսըրֆինկներ են յատկացուել ու Սեւանայ լճի ափին վինտսըրֆինկի ակումբ է հիմնադրուում»: Մօտ մէկ ամիս անց՝ 2007 թ. Յուլիսի 21ին, Ռ. Քոչարեանը՝ այն ժամանակ դեռ ՀՀ նախագահի պաշտօնում, կատարեց ՀՀ պատմութեան մէջ առաջին վինտսըրֆինկի կենտրոնի հանդիսատար բացումը»:

ՉՈՐՐՈՐԴ ԱՌԱՍՊԵԼ

Առասպելներէն շորրորդը կը վերաբերի Հիմնադրամին վարչական ծախսերուն: Ըստ շրջող լուրերու, անոնք կը կազմեն ընդհանուր պիւտճէին գրեթէ կէսը: Քոթեանեան հերքելով այդ լուրերը, ըսած է, թէ անոնք կը կազմեն ընդհանուր պիւտճէին միայն 7%ը: Բացատ-

րած է, թէ Հիմնադրամին գումարներուն 20%ը կը ծախսուի ջրամատակարարման ծրագրերու, 10%ը՝ կազմի ցանցի հաստատման եւ ճամբաներու շինութեան, 11%ը՝ ընկերային, մշակութային եւ այլ ծրագրերու, 11%ը՝ առողջապահութեան, 41%ը՝ կրթութեան ոլորտին. անդին ընդամենը միայն 7%ը կ'երթայ «administrative expense»ին, այսինքն վարչական ծախսերուն:

Այս մասին ալ լրագրողը իր մերկացումը կը հաստատէ բարեսիրական միջազգային այլ մեծ ընկերակցութիւններու հետ բաղդատականներու վրայ: Կ'ըսէ թէ անկարելի է 7%ով պատշաճ աշխատանք տանիլ, բացատրութիւններ կու տայ այդ մասին:

ՅԱՐՈՒԹԻԻՆ ԿՈՊԷԼԵԱՆ

(Ծար. 1)

ՎԵՐՋԻՆ ԱՆՄԵՂԸ

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ



Այսպէս թէ այնպէս, վճիռը տրուած էր: Իրեն գործ չէր մնար այլեւս: Հոփսփայտին կալուածն էր խնամախօսութեան յայտագիրը: Մտիպողական պարագաներուն միայն կրնար շնորհել իր ներկայութիւնը: Մարդը որ հսկայ Կուսակցութեան մը բեռը կը շալկէ եւ Կուսակցութեան ուսերովն ալ Ազգը կը կրէ – Ազգն ալ մէկ ըլլայ: Սփիւռքը կայ, Հայաստանը կայ, դեռ միջազգային քաղաքականութեան թնճուկները կան որոնց պէտք է հետեւիլ – այսպէս ծանրաբեռնուած մարդուն պսակ-մսակի խնդիրներով չեն խանգարեր, նոյնիսկ եթէ մէկ հատիկ զաւկին պսակը ըլլայ:

Փառաւոր եղաւ անշուշտ պսակը: Գառնիկ մը չէր ամուսնացողը: Ընկեր Վարդանին մանչն էր: Առաջնորդ Արբազանը պահ մը մոռնալով «Լուսաբեր»ի ամենօրեայ խայթոցները, ինքնայօժար, ներկայ գտնուեցաւ, յուսալով թերեւս այդ սիրալիրութեամբ մեղմել իրեն դէմ բացուած պայքարին թափը, ինչ որ իր կողմէ չափազանցեալ լաւատեսութիւն մըն էր անշուշտ: Ընկերներու եւ համակիրներու հոծ խումբ մը եկաւ Աղեքսանդրիայէն: Օրը Կիրակի ըլլալուն, ազգային վարժարանի աշակերտութիւնը արձակուրդ չունեցաւ այդ առիթով, բայց մարզական միութիւնը պատուեց պսակուողները արիւնքներու ջոկատով մը: Պատիւ մը որմէ սիրով պիտի ուզէր հրաժարիլ Գառնիկ: Աքելլային յիշատակը...

Հարսին վրայ գուրգուրացող տիպար աներ մը եղաւ: Անթերիօրէն կենցաղագէտ, Կովկասի կնամեծարական օրէնքներուն քաջատեղեակ, ընկեր Վարդան առաջին օրէն որդեգրեց իր հարսը: Աղաւնին երջանիկ էր ու միշտ շոյուած: Բոլորին վրայ իր պատկառանքին շուքը ձգող, վախազուր ընկեր Վարդանը հարսին համար փափկանկատ հայր մըն էր, յաճախ նոյնիսկ շէն ու զուարթ ընկեր մը, հաճելի պատմութիւններով: Խորքին մէջ պարզ ու համեստ հայ աղջիկ, կանացի պշրա-

սիրութիւններէ գերծ, լիովին բաւարարուած էր իր նոր տունին մէջ, հմայիչ մթնոլորտով: Գառնիկին պէս աղուոր ամուսին մը ունենալու գոհունակութեան կը միանար նաեւ ընկեր Վարդանին հարսը ըլլալու հպարտութիւնը: Իր ծննդեան տարեդարձին, պատմական կոչուելու արժանի դէպք մըն ալ: Չտեսնուած պատկեր, իրիկունը ընկեր Վարդան դռնէն ներս մտաւ հսկայական ծաղկեփունջով մը: Առաջին ամիսներուն էր:

Մեծարեց, շոյեց, գովաբանեց, ու՛ մոռցաւ, ինչպէս յաճախ կը մոռնար կին ու զաւակ: Իր աշխարհը դուրսն էր, աշխարհին հոգերը, իրադարձութիւնները, ոչ տունը...

Մակար-Վարդան առանցքէն ետք, թարմութեան եւ աշխուժութեան ալիք մը տարածուեցաւ եգիպտոսէն, Սփիւռքի մէկ ծայրէն միւսը, ընկեր Վարդանին վերանորոգիչ շունչով: «Լուսաբեր»ի ընդարձակ խմբագրականներէն աւելի ծաւալուն գաղտնի շրջաբերականներ ձամբայ ելան դէպի մասնաճիւղերը: Առաջին հրահանգն էր ուղղուած Կուսակցութեան մամուլին – եւ միայն կուսակցական էր սփիւռքի մամուլը – տեղ չտալ Մարտկոցական որեւէ գրչի, յատկապէս Վազգէն Շուշանեանի գրութիւններուն, նոյնիսկ եթէ զուտ գրական էջեր ըլլան: Սուրիոյ մէջ ուսուցչական պաշտօններէ զրկել այն բոլոր ընկերները, որոնք համակրանք ցոյց տուած ըլլան Մարտկոցին: Բացարձակապէս արգիլուած է կազմակերպական շրջաններուն՝ կապ պահել իրարու հետ, առանց Բիւրոյի խողովակէն անցնելու: – «Ընկերներ, կը վերջանար շուրջ տասը լայն էջեր գրաւող շրջաբերականը, մեզ պէտք չեն խախտած հոգիները, տարուբերուող զանգուածներ պէտք չեն, մեզ պէտք է հաւատաւոր, կուռ փոքրամասնութիւնը: Մաքրագործել շարքերը – ահա՛ օրուան հրամայա-

կանը եւ Բիւրոյի հրահանգը»:
Եւ կը մաքրագործէին...

Մակար, Երուսաղէմի իր անկիւնէն, ներողամիտ կը ժպտէր, ի տես այս աղմկարար եռանդին, ու պատճառ մը չէր տեսներ միջամտելու, ներքնապէս անտեղի գտնելով հանդերձ Վարդանին իրարանցումը: Քանի մը ամիսը մէկ ժողովի կ'երթար Գահիրէ, ընդհանուր թելադրանքներ կ'ընէր ու կը դառնար Պաղեստին: Հիմա ինքն ալ խանդավառ Հրէական քիպուցներու յաջողութեանէն, որոնց մասին ուսումնասիրութիւն մըն ալ պատրաստելու վրայ էր, հաստատ կը մտադրէր Հայաստանի ազատագրումէն ետք – նշաններ կային թէ մօտալուտ սովետական կոլիսօցները փոխարինել նման քիպուցներով:

Բայց ընկեր Մակար դադրեցաւ ժպտելէ այն օրը, երբ Սուրիոյ մէջ աւելի քան երկու հարիւր սասունցի ընկերներ մէկ անգամով մաքրագործուեցան, արտաքսուելով շարքերէն: Սասունցիները աւանդաբար կը կազմէին ընկեր Մակարին յենարանը, Կուսակցութեան մէջ եւս պահելով զուտ հայրենակցական սերտակցութիւն մը, գաւառական կապը, կարծր մետաղի մը պէս որ կը մերժէ հալիլ գաղափարական հնոցին մէջ: Կուսակցութեան հանդէպ անխախտօրէն հաւատարիմ, բայց եւ անհանդարտ տարր մը կը մնային Կուսակցութեանէն ներս: Իրենց դէմ կար, ոչ նուազ ինքնամիտփի եւ այլամերժ կիլիկեցիներու մեծ զանգուած մը, յատկապէս Կիլիկիոյ Այնթապ քաղաքէն, եւ Սփիւռքի ամենէն հոծ եւ աշխույժ կուսակցական շրջանը, Սուրիան, յաճախ թատր կը հանդիսանար Այնթապ-Մասուն հակամարտութեանց, ծանրօրէն վտագելով Կուսակցութեան միասնականութիւնը: Տագնապին լուծումն էր որ գտած էր ընկեր Վարդան, Գորդեան հանգոյցին դէմ Աղեքսանդրի սուրով:

Մակարին վրդովումը առաւել կը բորբոքէր մանաւանդ անով, որ, անկախ խմբակցական եւ անձնական նկատումներէ, արտաքսուած սասունցիներուն մէջ կային գէնքի ընկերներ, հին հայդուկներ, իրենց արիւնով մկրտուած գաղափարի նուիրեալներ: Առաջին շոգենաւով հասաւ Աղեքսանդրիա, առանց կանգ առնելու իջաւ Գահիրէ եւ առաջին գործը եղաւ այրող լուացողական մը Վարդանին գլխուն.

– Դուն որո՛ւ հացը կերած որի՞ շունը կ'ըլլաս որ Կուսակցութեանէն կ'արտաքսես Սպաղանաց Արտաշը, Շենիկցի Վարդանը, Սեմալի Գուրգէնը...



**CROIX BLEUE DES
ARMÉNIENS
DE FRANCE**
ՖՐԱՆՍԱՀԱՅ
ԿԱՊՈՅՏ ԽԱԶ

La section Astrig du Val d'Oise

organise
le samedi 19 mars
sa soirée annuelle avec,
en exclusivité,
Harout PAMBOUKJIAN
accompagné de son orchestre.
À partir de 20 heures
à l'Espace Charles Aznavour,
avenue P.V. Couturier
à Arnouville (95400).

Tarif de l'entrée: 90 €.

Réservations :
Anaïde: 01 39 85 19 40 / 06 20 84 88 61.
ou Séta: 01 39 87 65 02 /
06 18 50 70 58

**Section ARAX de Lyon
Villeurbanne**

Dans le but de garder nos
traditions et pour assurer leurs
transmissions
La Croix Bleue des Arméniens
de France section de Lyon
Villeurbanne vous convie
au repas de MITCHINK (Mi-Carême)
préparé spécialement pour cette journée
le mercredi 30 Mars 2011
à 12heures
à la salle de Garbis Manoukian
295, rue André Philip 69003 Lyon
réservation- MCAV: 04 78 26 28 10
CBAF 04 78 23 75 13

ՄԻՋԻՆԸ

Ֆրանսահայ Կապույտ խաչի Լիոն-
Վիլլեորպանի Արաքս Մասնաճիւղը
կը հրաւիրէ ձեզ միասին տօնելու
մեր աւանդական Միջինը
եւ ճաշակելու՝ մասնաւորաբար
պատրաստուած
օրուան յատուկ ճաշերը
Չորեքշաբթի 30 մարտ 2011ին
ժամը 12-ին Լիոնի Ա.Յակոբ
Եկեղեցոյ կից Կարպիս Մանուկեան
Սրահին մէջ:
ապահովեցէ՛ք ձեր տեղերը
հեռաձայնելով
ՖԿԻՄ՝ 04 78 23 75 13 եւ
ՎՀՄՏ՝ 04 78 26 28 71 թիւերուն

ՎԱՐՁՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

Երկու սենեակ
կահաւորեալ կամ ոչ
բոլոր յարմարութիւններով
Վէնսէնի անտառին մօտ
Մերթո՝ Շառանթոն-Էքոլ
Հեռ.՝ 06 29 52 69 31

À LOUER

2 pièces, meublées ou non
Près Bois de Vincennes
Tout confort
Toutes commodités
Métro Charenton-Écoles
Tél. : 06 29 52 69 31

**LA SECTION DÉCINES
Organise**

Un repas dominical
à l'occasion du Mi-Carême
Le Dimanche 3 avril
à partir de 12 h
À la Salle des Fêtes de Décines
Avec un menu de mets traditionnels
de Mi-Carême
L'après-midi sera animé par
D.J Mika
Participation pour les adultes
20 €, apéritif et vin compris
Enfants jusqu'à 10 ans: 12 €
Renseignements et réservation au
06 50 90 22 63 ou
06 21 74 43 50

**LA SECTION ASTRIG
DU VAL D'OISE**

vous invite
à participer à l'après-midi
« Rencontre et Culture »,
le lundi 11 avril, à 14 heures,
au 71 avenue Henri Barbusse à
Arnouville (95400).
Le thème du jour sera :
Les intellectuels et notables
victimes du génocide.
Venez discuter avec nous de tout
et de rien... Chaque personne peut
s'exprimer...
À noter que d'autres sujets peuvent être
abordés car la « parole est ouverte ».
Renseignements:
Anita BOGHOSSIAN:
01 39 90 76 19 – 06 16 79 93 26

ՄԱՐԶԱԿԱՆ

Հայկական խումբերու շաբաթավերջի
արդիւնքներն են.

ՖՈՒԹՊՈՒ

Պուռ լա Ռէն(2) - ՀՄԸՄ Ֆրանս 2-1
Ի.Ժ.Ա. Ալֆորվիլ - Ամիէն 2-4
Ա. Էս. Արարատ Իսի - Սանուա Սէն 2-1
Կրասիէն 2-1
Ի.Ժ.Ա. Լիոն Տէսին - Միլլերի Վուրլ 3-1
Շ.Ո.

**SECTION ASTRIG DU VAL D'OISE
COMMUNIQUÉ**

Afin de réaliser pleinement son
programme d'enseignement de
la langue arménienne, qui doit
conduire nos enfants à l'épreuve
d'arménien au baccalauréat, la
CBAF section Astrig du Val d'Oise
ouvre une classe de maternelle pour
les enfants de 3 à 6-7 ans.
Des jeux, de la danse, du dessin,
des activités diverses, privilégiant
l'expression orale, auront pour
objectif l'apprentissage de la langue
arménienne.
Inscrivez rapidement vos enfants à la
CBAF section Astrig d'Arnouville
Tel : Maral KELECHIAN
01 39 85 26 32
06 72 45 73 47

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսահայ Կապույտ Խաչի Վալ
տ՝Ուազի «Աստղիկ» մասնաճիւղը իր
երկօրեայ հայերէն լեզուի ուսուցման
ամբողջական ծրագիրը հետետողական
դարձնելու համար, այս տարի
զարկ կու տայ մանկապարտէզի
դասարաններուն Յէն 6-7 տարեկան
մանուկներու համար:
Խաղ, երգ, պար, մարմնական
շարժումեւ, գծագրութիւն, ձեռային
աշխատանք եւ այլ զբօսներ հիմք
պիտի ծառայեն յատկապէս բերանացի
հայերէնով հայ մանուկը ընտելացնելու
հայերէն լեզուին:
Շուտով դիմեցէ՛ք Ֆրանսահայ Կապույտ
Խաչի Արնուվիլի մասնաճիւղին՝
Մարալ Քէլէչեան - հեռաձայն՝
01 39 85 26 32 - 06 72 45 73 47



Péniche ANAKO
des peuples et cultures du monde

LE MOIS DE L'IRAN

mardi 15 à 20h30
Concert - «Tchahar Shambeh Sourj»
La Fête du feu iranien
& Projection du film «l'Ami»

mercredi 16 à 20h30
atelier de chants et danses arméniens
participation 6 euros

jeudi 17 mars à 20h30
Jam Session avec Isabelle Sorling, chant,
Leonardo Montana, piano,
Nicolas Moreaux, contrebasse,
Anne Pacey, batterie
participation 8 euros, 6 t.r.

du vendredi 18 au dimanche 20 mars
expo-vente de flûtes à bec artisanales
vendredi 18 mars 10h jusqu'à 21h, nocturne
samedi 19 mars 10h - 18h)
dimanche 20 mars 10h - 13h
entrée libre

samedi 19 mars à 21h
«Chants de printemps», concert de musique
traditionnelle iranienne avec l'ensemble
Delgosh. Taghi Akhbari, chant,
Nader Aghakhani, târ,
Arash Rashid Shomali, tombak.
participation 12 euros, 8 t.r

dimanche 20 mars à 16h30
«Aseghi dzaguen, Paregoutan»
avec Anahid Sarkissian, spectacle
tout public
en langue arménienne.
participation 8 euros, 6 t.r.

mardi 22 mars à 20h30
film «l'Ami» de Sara Rastegar

mercredi 23 à 20h30
Contes à Croquer
participation 6 euros

jeudi 24 mars à 20h30
concert de jazz Astargallus
avec Stéphane Payen, sax,
Xavier Bornens, trompette,
Ianik Tallet, batterie, Thierry Mavian
Marietan, contrebasse.
participation 8 euros, 6 t.r.

samedi 26 mars à 20h30
Azarine 6 jazz «multi kulti» Assen Tzankov,
batterie, Nicolas Bezins, trompette, Jean
Baptiste Lecanu, basse,
Arshid Azarine, piano, Habib Mefteh
Boushehri, percussions, flûtes,
Stéphane Mouchabac, saxophones,
Hamid Reza Javdan et Nerijhe ,

**HAMASKAINE
COURANTS D'ART**



REPAS A L'OCCASION DE LA MI-CAREME

ՄԻՉԻՆՔ

LE DIMANCHE 3 AVRIL 2011 A 12 H 30

ԿԻՐԱԿԻ 3 ԱՊՐԻԼ 2011 ԺԱՄԸ 12 : 30

AVEC POUR LA PREMIERE FOIS :

- ❖ **LA TROUPE DE THEATRE DES ENFANTS DE COURANTS D'ART : "PAREGOUTAN"**
- ❖ **LA TROUPE DE DANSE C.B.A.F. - SOSSE MAYRIG**

PAF : ADULTE : 25,00 € Réservations :
ENFANT : 15,00 € Marie : 06 16 78 08 71
(6 à 12 ans) Seta : 06 10 25 17 16

HAMASKAINE - 60 Boulevard Pinatel - 13012 Marseille



**ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԸ
ՇԱԻԼԻ ՄԷՋ**

Շաիլի «Լենոն Շանթ» դպրոցի
աշակերտները
կը ներկայացնեն
Վարդանանքին նուիրուած
գեղեցիկ յայտագիր մը,
գեղարուեստական ճոխ բաժինով՝

ԿԻՐԱԿԻ, ՄԱՐՏ 20, ԺԱՄԸ 15ԻՆ
ATRIUM
Place Robert Schuman, 92370 Chaville
Մուտքը ազատ է

performances et voix
participation 12 euros, 8 t.r

dimanche 27 mars à 17h
Poésies arméniennes de
Nouvelle Djoulfa (Isphahan),
Rouben Haroutunian, chant, récitant
et setar,
Anouch Donabedian, kamantcheh.
participation 12 euros, 8 t.r

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Ալֆորվիլի Սուրբ Մեսրոպ
Կրթարանի մանկապարտեզի
աշակերտներուն համար
կը փնտռուի
**ԿԻՆ ՕԳՆԱԿԱՆ ՄԸ՝
ՀԱՅԱՍՏՍՍ**
ՇԱԲԱԹԱԿԱՆ 20 ԺԱՄ
Դիմել դպրոցի տնօրէնութեան
4, rue Komitas, Alfortville
Հեռ.՝ 01 43 96 18 13

**ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
ՓԱՐԻՉ**

ԱՐԵՒԱԳԱԼ ԵՒ ՀՄԿՈՒՄ
Ամեն Չորեքշաբթի ժամը 18ին
Խաղաղական եւ Հանգստեան
Ժամերգութիւն (հսկում)
Ամեն Ուրբաթ ժամը 10ին
Արեւազալի Ժամերգութիւն



**INTIME ARMÉNIE
PHOTOGRAPHIES DE
RÉGIS LABOURDETTE**

Exposition ouverte jusqu'au 20 mars
 du lundi au vendredi de 9h30 à 17h
 le samedi de 15h à 17h
 le dimanche matin jusqu'à 13h30
 Les photographies présentées
 sont à la vente

Cathédrale Apostolique arménienne
 Saint-Jean-Baptiste de Paris
 Salle Nourhan Fringhian
 15, rue Jean Goujon, Paris 8^e

**Galerie Gavart
Mariam Hakobyan**



du 7 au 27 mars 2011

Ouverture du lundi au samedi 10h30-12 et 13h-19h
 5, rue d'Argenson 75008 Paris
 Métro Minimesnil, tél. : 01 42 65 26 98
www.galeriegavart.com
www.mariamhakobyan.com

**CONTE
«Les Lions du Sassoun»**

Christine Kiffer
 racontera
 "Les Lions du Sassoun"
 extraits choisis de la fabuleuse
 épopée populaire arménienne
 "David de Sassoun"
 mardi 15 mars à 20h30 au
 Théâtre de la Vieille Grille à Paris
 Amour, bagarre, chevaux volants,
 héros, tyrans, enchantresses au
 programme

MUSIQUE ARMÉNIENNE

Lydie Barkev, piano
 Lucie Deroïan, chant

Concert au profit du
 Fonds Arménien de France
 (équipement d'écoles en Arménie)

dimanche 27 mars à 16h

Espace Saint-Sauveur
 Hôpital Corentin-Celton
 4 parvis Corentin-Celton
 Issy-Les-Moulineaux
 Métro Corentin-Celton, ligne 12,
 Direction Mairie d'Issy

Entrée libre participation

Cherche

jeune fille parlant arménien
 pour s'occuper d'une petite fille
 de 4 ans et demi
 le lundi, mardi et/ou jeudi soir.
 Paris 15^e; M^o Charles-Michels
 Tél. : 06 08 67 76 14

SPORTING

2gether 4justice

Jeux Sportifs

Intercommunautaires Arméniens
 de l'Union Arménienne de Suisse

22 au 25 avril 2011 à Genève
www.uas-games.ch

**ÉVÈNEMENT UNIQUE POUR
LA JEUNESSE ARMÉNIENNE
D'EUROPE**

Revendiquons - Manifestons
 Commémorons
 Participons au sport
 Échangeons - Rassemblons

Pour s'inscrire ou pour toute demande
 d'information,
 veuillez visiter le site www.uas-games.ch
 nous écrire à info@uas-games.ch
 nous appeler au 0041 79 303 17 49

Sous le Haut-Patronage de l'Ambassade
 d'Arménie en France

jours de l'Arménie

Ateliers créatifs
 23 mars, 30 mars et 6 avril

Spectacle de danse
 Compagnie Navasart
 Jeudi 24 mars à 20 h 30

Exposition
 du 23 mars au 6 avril

Concert chorale
 Koghtan de l'UGAB
 Samedi 2 avril à 20 h 30

Centre Culturel Alex Manoogian
 de l'UGAB
 118, rue de Courcelles 75017 Paris
 Entrée libre sur réservation
contact@agbueurope.org
 ou 01 45 20 03 18

Association MACHTOTZ
 Pour la Défense de la Langue Arménienne

L'ASSEMBLÉE GÉNÉRALE

de l'Association MACHTOTZ
 aura lieu

mardi, 22 mars à 18h

au Centre Culturel Alex Manoogian - U.G.A.B.
 118 Rue de Courcelles, 75017-Paris (Métro : Courcelles).

Ordre du jour :

Rapport moral - Rapport financier - Élection du nouveau Bureau - Divers
*Cette réunion revêt, cette année, un caractère particulièrement important car
 il sera évoqué la mise sur pied d'un nouveau projet. Votre présence est donc
 vivement souhaitée.*

le Conseil d'Administration